ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. (Angleterre)

Ամէն բան ժողովրդի մի-ջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ . . . ½ „

Ժողովուրդ, դու ինքդ (միայն կարող ես ծեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր եւ ծեռք բեր:

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 6. ՀՈԿՏԵՄԲԵՐ Nr 6. | 1895 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՅԱՂԹՎԱԾ ԳԱԶԱՆԸ.

Ղա դողաց, սարսափեց Ճնչակեան պայթիւնից, սուլթան դիւահնար արարածը, որ Թագաւորն է դժոխքի՝ Թիւրքիա անուն կրող: Ղա ահաբեկ եղաւ — և դողդոջուն ձեռքով ստորագրեց „բարեկորոգումների“ Իրադէն: Ստորագրեց, և անմիջապէս գղջաց... Իրադէ... այնպէս չէ, մի կտոր Թուղթ, որ ուզում էն մեր բերանը խթել մեր ձայնը կտրելու համար: Ճաշիւը սխալ է տեսնված: Մինչև որ մեր Թոքերում մի կաթիլ իսկ այժ մնայ, մենք կաղաղակենք, որ դժոխքի այդ Թագաւորն, այդ սուլթան չարագործը խաբեբայ է:

Ղէ՞ք տեսնում, որ մի ձեռքով ստորագրելով, միւս ձեռքով միաժամանակ նա շողշողացնում է կոտորածի սուրը և գաղտագողի կերպով հրդեհում մեր տուն ու գիւղերը: Ջնջել հայերին — իր քաղաքականութիւնն է, և եթէ ստորագրեց, սեփական լրբութեամբ և հայերի արեան հեղեղով ջնջել այդ ստորագրութիւնը սոսկատիպ ժամլուքի համար ոչինչ չարժէ:

Ղա խաբեբայ է, ինչպէս իր բոլոր նախորդները: Իր կարասներում լքցրած մեր արիւնը դեռ հին գինու պէս Թունդ եղած չէ, որ խմելով՝ նա հարբէր և ստիպված ստորագրելով մէկ Իրադէ, հարբած Թոյլ տար, որ այն իր ձեռքից խլէին: Ղա խաբեց Եւրոպային — եթէ միայն կարողացաւ խաբել, — բայց ո՛չ մեզ: Իր տրխմարութեամբ նա կարծում է, Թէ մենք էլ տխմար ենք: Բայց Թող իմանայ, որ մենք արեան արցունքներով ենք լացում և սրի հարուածով դիմադրում: Ճայերի դիակները ծանր քարերի պէս կախված են նրա սուլթանական վզից և նրան իրանց հետ միասին կիջեցնեն Բոսֆորի խոր յատակը:

Մարդասպանների այդ պետն ամեն տեղ տաղեցրել էր Բ. Դռան աւազակ մինիստրներին և պալատում, հարէմական մթնոլորտում, որջացած փաշա և բէկ էֆէնդիներին. իսկ սուլթանն իր կողմից բոլորովին դիւահարված էր երևում, այն աստիճան, որ նշանաւոր թէքքէների և մզկիթների շէյխերը և մերկանդամ դարվիշները թալիսմանական „նուսխաներ“ էին շինում, որ նա աջողութեամբ կարողանայ խեղդել իր գեավուր հպատակներին բանտի խորքերում և Բոսֆորի ալիքներում... Իսկապէս թիւրք կառավարութիւնը երբէք չէր կարող կարծել, թէ Կ. Պոլսի 90 թ. ցոյցից յետոյ կարող էին և նոր հերոսներ երևան գալ և աւելի թափով կուել: Դրա համար էր, որ սուլթանի ոստիկանապետ Նազըմն իր թովչական խօսքերը „արթըգ բիթտի“ էր ասել հանգստացնելու համար իր վրդովված պետին:

Գաւառներում երևան եկած խլրտումները, որ օրից օր աւելի ծաւալ էին ստանում, և որ „հասարակաց անդորրութիւնը խանգարող աւազակային խմբերի չարագործութիւն“ անունով էին մկրտված Բ. Դռան կողմից և այդ անունով էլ ներկայացված հարէմական խաղերում գլուխը կորցրած „Ալլահի յաջորդին“, մի տեսակ խիստ ձնշող անհանգստութիւն էին առաջացրել ամբողջ կառավարական շրջանում: Իր ներկայ կեղծ քաղաքակրթված ձևակերպութիւններում թիւրքն ինքն իրան տակաւ էր ըզգում մրցել այդ երկիրը տակն ու վրայ անող „սրիկաների“ հետ: Նա մտաբերում էր հին օրերը, երբ արևելքից դէպի արևմուտք իբր պատուհաս խուժող՝ իր նախահայրերն, առանց օրէնքի, առանց մարդկային զգացումների, ժանտախտի նման անցնում էին իրանց հանդիպած երկիրներից, իրանց ետև թողնելով սոսկում ու արհաւիրք, անհամար մարդկային դիակներ, քար ու քանդ եղած քաղաքներ ու գիւղեր և որոնք իրանց առջևից ոչխարի հօտի նման քշում, տանում էին գեղեցիկ երիտասարդներին և աղջիկներին, առաջինները թիւրքացնելով մանկաւիկներ շինելու, իսկ երկրորդներով իրանց թաթարական հարէմը զարդարելու... Ունենալ այդպիսի արիւնոտ, վայրենի ու փառաւոր անցեալ, կոտորող և աւարի տվող նախահայրեր և նրանց մարդկային ոսկորներից կառուցած գահի վրայ հանգիստ նստել, չը լինել արժանաւոր ժառանգ իր պապերի՝ դա անկարելի էր... Բայց միւս կողմից նա գտնվում էր քաղաքակրթված աշխարհի հէնց քթի տակ: Կայսրներ էր ընդունում և կայսրուհիներին թև տալիս, նա ինքն էլ, ստիպված իրան շրջապատող հանգամանքներից, իր կողմից աշխատում էր քաղաքակրթութեան ակնոց դնել աչքին և ժամանակի պահանջներին հետևող ու համակերպող ձևանալ: Բայց այդ ամենն անում էր կապկութեամբ, մի կերպ ջանալով ծածկել իր մերկ վայրենիութիւնները, որ, երևի, շատ էլ հաճելի չէին թւում իր եւրոպական փափուկ ճաշակների և նազանքի մէջ մեծացած պաշտօնակիցներին:

„Մինչև հոգին դուրս չը գայ, բնաւորութիւնն էլ դուրս չի գալ“, ասում է թիւրքական առածը: Եւ թիւրքը, հաւատարիմ իր ժողովրդական այդ ասացվածին, նոյնն է իր քաղաքակրթութեան զգեստներում, ինչպէս իր բարբարոս նախահայր մոնգոլներն իրանց նետ ու աղեղներով և իրանց բացարձակ վայրե-

---

ԱՐԵՒԱԾԱԳԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆՈՒԷՐ ՏԻԿԻՆ Մ. Ն... ԻՆ

(Շարունակութիւն) [1])

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԸ.

Ակած Փոքր-Հայքի և Կապադովկիայի քաղաքներում ցրված յայտնի Ցայտարարութիւնների դէպքերից, որոնց հետևանքը եղաւ Գաղատիայի նշանաւոր դատավարութիւնը և սուլթանի կանգնեցրած կախաղանը և հինգ Հընչակեան ասպատակների նահատակվելը, Թիւրքական ներքին քաղաքականութիւնը բոլորովին ուրիշ կերպարանք ստացաւ: Ո՛չ Թէ միայն այն պատճառով, որ այդ Ցայտարարութիւնները նրա „գերիշխանութեան“ էին հայհոյել, նրա ֆանատիկոսութիւնը գրգռել և այդպիսով զայրացրել նրան, այլ Թէ ինչպէս գեավուրը, ստրուկ գերին, համարձակվել էր իր ցաւերը զգալ, ի՞նչպէս նա համարձակվել էր իր իրաւունքների մասին ձայն բարձրացնել և կառավարութեան փտած ու հոտած կեանքի մասին խօսել, նրա բարբարոսութիւնը քննադատել, նրա փչացած ու անբարոյականացած կեանքը երևան հանել: Այդ բանն աւելի կատաղեցրել էր Բ. Դռան աւազակ մինիստրներին և պալատում, հարէմական մթնոլորտում, որջացած փաշա և բէկ էֆէնդիներին. իսկ սուլթանն իր կողմից բոլորովին դիւահարված էր երևում, այն աստիճան, որ նշանաւոր թէքքէների և մզկիթների շէյխերը և մերկանդամ դարվիշները թալիսմանական „նուսխաներ“ էին շինում, որ նա աջողութեամբ կարողանայ խեղդել իր գեավուր հպատակներին բանտի խորքերում և Բոսֆորի ալիքներում... Իսկապէս թիւրք կառավարութիւնը երբէք չէր կարող կարծել, թէ Կ. Պոլսի 90 թ. ցոյցից յետոյ կարող էին և նոր հերոսներ երևան գալ և աւելի թափով կուել: Դրա համար էր, որ սուլթանի ոստիկանապետ Նազըմն իր թովչական խօսքերը „արթըգ բիթտի“ էր ասել հանգստացնելու համար իր վրդովված պետին:

Գաւառներում երևան եկած խլրտումները, որ օրից օր աւելի ծաւալ էին ստանում, և որ „հասարակաց անդորրութիւնը խանգարող աւազակային խմբերի չարագործութիւն“ անունով էին մկրտված Բ. Դռան կողմից և այդ անունով էլ ներկայացված հարէմական խաղերում գլուխը կորցրած „Ալլահի յաջորդին“, մի տեսակ խիստ ձնշող անհանգստութիւն էին առաջացրել ամբողջ կառավարական շրջանում: Իր ներկայ կեղծ քաղաքակրթված ձևակերպութիւններում թիւրքն ինքն իրան տակաւ էր ըզգում մրցել այդ երկիրը տակն ու վրայ անող „սրիկաների“ հետ: Նա մտաբերում էր հին օրերը, երբ արևելքից դէպի արևմուտք իբր պատուհաս խուժող՝ իր նախահայրերն, առանց օրէնքի, առանց մարդկային զգացումների, ժանտախտի նման անցնում էին իրանց հանդիպած երկիրներից, իրանց ետև թողնելով սոսկում ու արհաւիրք, անհամար մարդկային դիակներ, քար ու քանդ եղած քաղաքներ ու գիւղեր և որոնք իրանց առջևից ոչխարի հօտի նման քշում, տանում էին գեղեցիկ երիտասարդներին և աղջիկներին, առաջինները թիւրքացնելով մանկաւիկներ շինելու, իսկ երկրորդներով իրանց թաթարական հարէմը զարդարելու... Ունենալ այդպիսի արիւնոտ, վայրենի ու փառաւոր անցեալ, կոտորող և աւարի տվող նախահայրեր և նրանց մարդկային ոսկորներից կառուցած գահի վրայ հանգիստ նստել, չը լինել արժանաւոր ժառանգ իր պապերի՝ դա անկարելի էր... Բայց միւս կողմից նա գտնվում էր քաղաքակրթված աշխարհի հէնց քթի տակ: Կայսրներ էր ընդունում և կայսրուհիներին թև տալիս, նա ինքն էլ, ստիպված իրան շրջապատող հանգամանքներից, իր կողմից աշխատում էր քաղաքակրթութեան ակնոց դնել աչքին և ժամանակի պահանջներին հետևող ու համակերպող ձևանալ: Բայց այդ ամենն անում էր կապկութեամբ, մի կերպ ջանալով ծածկել իր մերկ վայրենիութիւնները, որ, երևի, շատ էլ հաճելի չէին թւում իր եւրոպական փափուկ ճաշակների և նազանքի մէջ մեծացած պաշտօնակիցներին:

„Մինչև հոգին դուրս չը գայ, բնաւորութիւնն էլ դուրս չի գալ“, ասում է թիւրքական առածը: Եւ թիւրքը, հաւատարիմ իր ժողովրդական այդ ասացվածին, նոյնն է իր քաղաքակրթութեան զգեստներում, ինչպէս իր բարբարոս նախահայր մոնգոլներն իրանց նետ ու աղեղներով և իրանց բացարձակ վայրե-

1) Տես „Ապտակի“ առաջին տարի Nrs 7—12 եւ երկրորդ տարի Nr 1—5.

ՓՈԹՈՐԻԿԸ ՊԱՅԹԵՑԱՒ... ԿԵՑՑԷ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ...

սակ գնով ուզում է մեզ կոտորել։ Հատ լաւ։ Մենք էլ մեր կեանքի գնով կաշխատենք պաշտպանվել, դիմադրել։ Ինչպէս երևում է նա դեռ միայն մէկ աստիճան է խելօքացել Հնչակեան վերջին փառաւոր շարժումից յետոյ։ Դա ուզում է, որ իրան նորանոր դասեր տանք։ Դա մինչև երկրորդ աստիճան խելօքանալը՝ մի գեղեցիկ օր նա կը զարթնէ և իր թագաւորութիւնն էլ, իր անձն էլ անխուսափելի վըտանգի մէջ կը տեսնէ։ Դա պատրաստում է իր դիակը։ Մենք նրան կօգնենք այդ պատմական սքանչելի աշխատութեան մէջ։ Մենք նրան հսկում ենք։ Այսօր նա շարունակում է մեզ կոտորել, մենք էլ կը շարունակենք կռուել և աւելի սոսկալի պայթիւն, քան Կ.Պոլսինը, կը դըրդեցնենք նրա գլխին մեծ ապստամբութեամբ։

Թող շարունակէ իր կոտորածը. արդէն սատրագրված խեղկատակ „բարենորոգումների“ համար չէ ամենևին, որ մենք թափեցինք, թափում ենք և կը թափենք մեր արիւնը։ Արեան շարքը տևելով, մենք, այո, կօգտվենք դրանից, և այն ժամանակ մեր տված յաղթական հարուածն արդէն յաղթված գազանի գլխին և նրա կրելիք կատարեալ պարտութիւնը — կը լինեն վերջինները։

Լօնդօնի „Տայմս“-ի հոկտեմբեր 4-ի առաջնորդողից.—

„Երէկ Կ. Պոլսի անկարգութիւններից մինչ արդէն նախատեսնում էինք, որ ռէվոլվերի պայթիւնը կայսերական պալատի մօտերն աւելի շուտ կազդէ Աբդուլ Համիդի վրայ, քան խաղաղ դիպլոմատիայի ամեն դիմումները.... Հայերի գործերը ցոյց տվին, որ կան առարկութիւններ, որոնք կարող են ազդել նաև Աբդուլ Համիդի վրայ։ Գուցէ ոմանք իսկ մեղադրեն հայերին, բայց յամենայն դէպս անհերքելի է, որ նրանք ունեցան աջողութիւն։“

Լօնդօնի „Ստանդարդ“-ից, 8 հոկտեմբերի.—

„Ցոյցի ղեկավարներն ապացուցեցին մի խորին հըմտութիւն, որ ունեն վիճակի ու ժողովրդի տրամաբանութեան մասին...“

Նոյն թերթ, 30 սեպտեմբերի առաջնորդողում.—

„Պէտք է ընդունել, որ Հայկական ազգոտացիան կատարեալ վարպետութեամբ է առաջ տարվում։“



ԿԵՑՑԷ՛ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ.

Եղբա՛յր, կուէ, պարէ, երգէ.
Պիտ կործանես զարշ բռնութիւն,
Ըստրկութիւն.
Սրէ մի՛ վախնար եւ ո՛չ վէրքէ։
Կեցցէ՛, կեցցէ՛, ազատութիւն։

*

Մեր կեանքին խաւարին մէջ կայծակն փայլեցաւ
Եւ մահը հար պահակ մեզ այնտեղ կանգնեցաւ։
Որոտը խիստ զարկեց, թափվեցաւ հեղեղը.
Մեր ձեռքը չը մնաց իսկ մեր հացն ու ասեղը։
Խառնիխուռն քանդուեցան
Մեր գիւղեր ու քաղաք,
Բայց պայթեց մեր հրացան
Սուլթանի քըթին տակ։

*

Եղբա՛յր, կուէ, պարէ, երգէ.
Պիտ կործանես զարշ բռնութիւն,
Ըստրկութիւն.
Սրէ մի՛ վախնար եւ ո՛չ վէրքէ։
Կեցցէ՛, կեցցէ՛, ազատութիւն։

*

Հայրենի ծիծաղն անհանգիստ վեր թռաւ,
Արիւնը երկնքի կապոյտը ողջ փռաւ,
Զէնքերի շաչիւնը փայլակներ կը թափէր,
Լոյս տալով դիերը, որ մահը կը լափէր։
Արշաւին մարտական
Մերոնց էր քաջութիւն.
Թէ ընկան յաղթական —
Կոտակեցին փրկութիւն։

*

Եղբա՛յր, կուէ, պարէ, երգէ.
Պիտ կործանես զարշ բռնութիւն,
Ըստրկութիւն.
Սրէ մի՛ վախնար եւ ո՛չ վէրքէ։
Կեցցէ՛, կեցցէ՛, ազատութիւն։

*

Զայնի տակ թշնամու ահաւոր փողերուն՝
Մերայինք պաշտպան են իրենց սուրը հողերուն.
Մատղահաս, նոր բացած աչքերը երկնքին՝
Տան իրենց արիւնը հայրենեաց երկունքին։
Եւ այնժամ, երբ խաղաղ
Պիտ դեռ ժպիտն առաջին,
Կը տեսնեն անոնք հար
Մահն իրենց առաջին։

*

Եղբա՛յր, կուէ, պարէ, երգէ.
Պիտ կործանես զարշ բռնութիւն,
Ըստրկութիւն.
Սրէ մի՛ վախնար եւ ո՛չ վէրքէ։
Կեցցէ՛, կեցցէ՛, ազատութիւն։

*

Աշխարհը զարմացաւ, երբ անոնք ներկեցին
Արիւնով իրենց դաշտ, ուր բաղդը հերկեցին,
Երբ վրէժի հարուածը կուղղէին դէպ սուլթան,
Երբ ըմբոստ՝ ջարդէին բռնութեան կուռ շղթան.
Եւ արցունքն կը խառնուէր
Ծիշին հետ մարտական,
Եւ քաջը գըլորուէր
Յաղթութեամբ պատմական։

*

Եղբա՛յր, կուէ, պարէ, երգէ.
Պիտ կործանես զարշ բռնութիւն,
Ըստրկութիւն.
Սրէ մի՛ վախնար եւ ո՛չ վէրքէ։
Կեցցէ՛, կեցցէ՛, ազատութիւն։

*

Շանթըն Արամազդի՝ երկնով որոտընդոստ՝
Ճանբան լուսաւորեց քաջերի այն ընդոստ,
Հեփեստի հրաշակերտ ամուր մուրճն ու զնդան
Հրով յեղափոխութեան շինեցին ապագան,
Երբ մրրկի քաօսին
Մէջ կոծող պիտ կանգնէ,
Մահարծան հերոսին,
Որ նոր կեանքն կողջունէ։

*

Եղբա՛յր, կուէ, պարէ, երգէ.
Պիտ կործանես զարշ բռնութիւն,
Ըստրկութիւն.
Սրէ մի՛ վախնար եւ ո՛չ վէրքէ։
Կեցցէ՛, կեցցէ՛, ազատութիւն։

ԹԵՆԹԸ.

Նիւթեամբ։ Նա իր ամեն-մի ձեռակերպութիւններում պահել է իր բնատուր ունակութիւնը, իր ժառանգական բարբարոսութիւնը. քաղաքականացած աշխարհը որչափ էլ աշխատի „քարերի տակ դնել Նրա պոչը, երբ թող է տալիս՝ Նա միշտ իր կիսաշրջանակի ձեւն է ստանում“։ Էրթողրուլի, ներկայ սուլթանների տան նախահայրի և սուլթանական կառավարութեան հիմնադրի, օրից սկսած՝ Նա արիւնով լուացել է իր ձեռքը, կողոպուտներով և աւարառութիւններով է լքցրել իր գանձարանը, ոչ-մուսուլմանական տարրերից է յափշտակել իր հարէմական հօտի պէտքերը, Նրա պաշտօնեաները միշտ եղել են իրանց պետերի հաւատարիմ հետևողները և շատ կէսերում Նրանք մինչև անգամ կարող են պարծենալ իրանց աւելի վայրագ բնաւորութեամբ և բարբարոս արարքներով, քան իրանց մարգարէի „փոստի“ (մորթ) վրայ ծալապատիկ նստող խալիֆան։ Դա նոյնն է և այսօր, թէև հըսկայական չալմաների և քիւլահների տեղ Նա դնում է թեթև ֆէս և Նրա վրայ թուղերի (իշխանական փետուր) տեղ փայլում են մահիկն ու աստղը և մետաքսեայ սև փիւսկիւլները քամու հետ խաղեր են անում, լայն անդրավարտիքների և փէշաւոր անշնորհք ջիւբբէների տեղ Նա հագել է „ալ ֆերանկա պանտալոն և սեգրի“, կոշտ ու կոպիտ տրեխների և անշնորհք գեղին փաբուջների տեղ Նա ունի կալոշ-բոտիններ։ Դա փոխած է իր զգեստը, Նա խօսում է քըծնող քաղաքավարութեամբ և շնորհալի շարժումներով, բայց իր բնաւորութիւնը նոյնն է։ Նա առաջ կողոպտում էր դուրսը փողոցներում, հրապարակի վրայ, դաշտերի մէջ, իսկ այժմ խեղդում է բանտերում, ծովի յատակներում... Դրանց շնորհով այսօր աւազակութիւնը և մարդասպանութիւնը ստացել են մի պաշտօնական ձև. մի ժամանակ լեռներում որջացող աւազակները պաշտօնական զգեստներով և տիտղոսներով հաւաքվել են կառավարական շէնքի մէջ, սուլթանի դրօշակի տակ։

Հայկական խլրտումները մեծ զարկ տվին պաշտօնական աւազակների և Նրանց գործառնութիւնների զարգացման։ Չը կայ մի տեղ, ուր Նա ճիւղեր հաստատած չը լինի։ Ամբողջ դարվանդները (կիրճ), բէլերը (բարձր լեռնային անցքեր), որոնք անցեալ դարերում և ներկայ դարուս սկիզբները նշանաւոր դէրբէգիների, բոյ-բէգիների, աւշար թիւրքմէն և քիւրդ աշիրէթների, ռըշվան պատերազմասէր և վայրենի վրանաբնակների և բարբարոս զէյբէկ թափառական աւազակային խմբերի որջերն էին դարձել՝ և որոնցից այսօր էլ կարելի է տեսնել Մեծ Հայքում քէօչէր քիւրդեր անունով, մեծ մասամբ տեղի են տված կառավարութեան կողմից դարվանդներում իբր պահապան դրված պաշտօնական աւազակների, Ռուսաստանից վռնտված բարի պտուղ ղարա փափախների, իրանց ճակատներում Թիւրքաց օգոստափառ հրամանատարի անունը կրող և Նրա հաւատարիմ զինուոր համիդիէ բաշիբոզուկների և ջէննէթական հիւրիներով մայրաքաղաքի փաշաների վայրագ կրքերը յագեցնող և պետական հասարակաց տան, պալատի, համար հըրեշտակադէմ կոյսեր մատակարարող չէրքէզ լեռնականների։ Այն պայմանը կայ միայն, որ այժմ այս վերջիններս այնքան էլ պէտք չունեն այս կամ այն բէյ-երում, դարվանդներում և կամ անտառուտ սարերում ամրանալու, այլ մասնաւոր առանձնաշնորհումներով ամենայն համարձակութեամբ կարող են կողոպտել հասարակաց ճանապարհի ամեն-մի կէտի վրայ և դժուար պարագաներում՝ վայելել ոստիկանների աջակցութիւնը։ Այդ աւազակութիւնները կարելի է աղատ կերպով առաջ տանել, եթէ աչքի ընկնող մի բաժին հանվէ այս կամ այն քաղցած փաշային կամ բէկ էֆէնդիին, հաղարապետին, չաուշին և կամ դարվանդում որջացած ոստիկանին։ Եւ որովհետև Թիւրքիայի կառավարութեան ներկայ քաղաքականութեան հիմքն է ազատութիւն աւազակների ամեն բանի մէջ և գերութիւն ու կաշկանդումն պատուաւոր մարդկանց, մանաւանդ ոչ-մուսուլմանական ժողովրդներին, հետևաբար մէկի պակասը լրացնում է միւսը և այլ և այլ աստիճաններով պաշտօնի կանչված աւազակներից դատարկված բանտերը մնում են պատուաւոր դասակարգին։ Պէտք չէ զարմանալ երբ ոճրագործի շղթաների տակ հեծում է մի համակրելի ուսուցիչ, մի ժողովրդական բժիշկ, մի համեստ գործաւոր, մի պատուաւոր վաճառական, դպրոցական շրջանը նոր աւարտած վառվռուն և եռանդուն մէկ ուսանող։ Թիւրքիայի բարի նախանձմութիւնը, որ երևի այլ ևս ծերացել է և արևելեան բարդ ու խճճված խնդիրները նրա միտքն են պղտորել, իր դողդոջուն մատներով, հակառակ իր բարի կամքին, ստեղծել է մի տեսակ յոռեշրջութիւն, և մենք, ճակատագրին հաւատացող ու դրա փէշերից ջերմեռանդութեամբ պինդ բռնող արևելցիներս, իբրև հաւատարիմ բայեաներ, ի հարկէ, բաղդ կը համարենք միշտ հնազանդվել մեր երևակայած նախախնամութեան տնօրինութեան և դրա երկրային առաքեալներին, որ մեր արդի Թիւրք ու ամեն տեսակ մուսլիման կառավարիչներն են։

(Կը շարունակվի) Վ.ԻԹ.